

ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու հերթական նիստի վերաբերյալ

Համայնքը	Միջոցառման անվանումը	Օրը	Ժամը	Անցկացման վայրը
Շնող	Ավագանու հերթական նիստ	10.07.2020	17:00	Շնող համայնքի ղեկավարի աշխատասենյակ

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2020 թ. հունիսի 10-ին՝ ժամը 17:00-ին, ՀՀ Լոռու մարզի Ծ ն ո ղ համայնքի ավագանու՝ Շնողի համայնքի ղեկավարի աշխատասենյակում կայանալիք հերթական նիստի

Ժամը՝ 17:00

1.1 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 10 հունիսի 2020 թվականի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին»

Ձեկ.՝ Դ.Ղումաշյան

1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին :

Ձեկ.՝ Լ.Ներկարարյան

1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին

Ձեկ.՝ Դ.Ղումաշյան

1.4 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կողմից ներկայացվող «ՀՀ Լոռու մարզի Շնող խոշորացված համայնքի հեղեղատարների մաքրման և սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման» բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին

Ձեկ.՝ Դ.Ղումաշյան

1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու և վարձակալությամբ տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարները սահմանելու մասին

Ձեկ.՝ Դ.Ղումաշյան

1.6 «Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին»

Ձեկ.՝ Հ.Ճիճիլյան

1.7 «Առանձին անձանց հողի հարկի և գույքահարկի տույժերից ազատելու մասին»

Ձեկ.՝ Մ.Ալիխանյան

1.8 «ՀՀ Լոռու մարզի «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2020

թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում փոփոխություն կատարելու
մասին» Զեկ.՝ Հ. Առաքելյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ
10-Ի ԹԻՎ 9 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով՝ **Շնող համայնքի ավագանին որոշում
է՝**

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու 2020 թվականի հուլիսի 10-ի թիվ 9 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը՝
 - 1.1 «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի ավագանու՝ 10 հուլիսի 2020 թվականի թիվ 9 արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին»
 - 1.2 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման մասին :
 - 1.3 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի 2020 թվականի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին
 - 1.4 «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական հարկի նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կողմից ներկայացվող «ՀՀ Լոռու մարզի Շնող խոշորացված համայնքի հեղեղատարների մաքրման և սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման » բնապահպանական ծրագիրը հաստատելու մասին
 - 1.5 Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը վարձակալությամբ տրամադրելու թույլտվություն տալու և վարձակալությամբ տրամադրվող հողամասերի տարեկան վարձավճարները սահմանելու մասին

1.6 «Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին»

1.7 «Առանձին անձանց հողի հարկի և գույքահարկի տույժերից ազատելու մասին»

1.8 «ՀՀ Լոռու մարզի «Շնորհի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2020 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում փոփոխություն կատարելու մասին»

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ԸՆԹԱՑՔԻ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԼԻԼԻԹ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ և 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետերի և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի՝ **Շնորհ համայնքի ավագանին որոշում է.**

1. Ի գիտություն ընդունել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնորհ համայնքի ղեկավարի հաղորդումը ՀՀ Լոռու մարզի Շնորհ համայնքի 2020 թվականի տարեկան բյուջեի երկրորդ եռամսյակի կատարման ընթացքի մասին՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԴԱՎԻԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԼԻԼԻԹ ՆԵՐԿԱՐԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ 2020
ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇԻՌԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 23 հոկտեմբերի 2000 թվականի
«Հայաստանի Հանրապետության» հողային հաշվեկշիռը կազմելու կարգը
հաստատելու մասին թիվ 656 որոշման 9-րդ կետով՝ **Շնող համայնքի**
ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող
համայնքի հողային հաշվեկշիռը՝ 2020 թվականի հուլիսի 1-ի դրությամբ:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԴԱՎԻԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ

«ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ
ՎՃԱՐՎՈՂ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՀԱՐԿԻ
ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ
ՄԱՍԻՆ» ՀՀ ՕՐԵՆՔՈՎ
ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ
ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՂՄԻՑ
ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ «ՀՀ ԼՈՌԻԻ ՄԱՐԶԻ
ՇՆՈՂ ԽՈՇՈՐԱՑՎԱԾ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԵՂԵՂԱՏԱՐՆԵՐԻ ՄԱՔՐՄԱՆ ԵՎ
ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՎԻՃԱԿԻ
ԲԱՐԵԼԱՎՄԱՆ»
ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածով, «Ընկերությունների կողմից
վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման
մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ **Շնող համայնքի
ավագանին որոշում է.**

- Հաստատել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի կողմից ներկայացվող «ՀՀ
Լոռու մարզի Շնող խոշորացված համայնքի հեղեղատարների մաքրման և
սանիտարահիգիենիկ վիճակի բարելավման » բնապահպանական
ծրագիրը՝ համաձայն հավելվածի:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից :

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԴԱՎԻԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ ՇՆՈՂ ՀԱՄԱՅՆՔԻ
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՄԲ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ
ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ
ՎԱՐՁԱՎՃԱՐՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ
ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԴԱՎԻԹ ՂՈՒՄԱՇՅԱՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21-րդ ենթակետով, ՀՀ «Հողային օրենսգրքի» 48-րդ, 76-րդ, 81-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի գլխավոր հատակագիծը և Շնող համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Շնող համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել համայնքի ղեկավարին մրցութային կարգով վարձակալության տրամադրել համայնքի վարչական սահմաններում գտնվող Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կադաստրային քարտեզի՝ համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հետևյալ հողամասերը՝

1.1) Ծածկագիրը՝ 06-088-0224-0019, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.81555 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 16350 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.2) Ծածկագիրը՝ 06-088-0224-0002, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.08513 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 1800 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.3) Ծածկագիրը՝ 06-088-0224-0015, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.80475 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 16100 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.4) Ծածկագիրը՝ 06-088-0243-0113, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 15.31922 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 306400 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 15 տարի ժամկետով)

1.5) Ծածկագիրը՝ 06-088-0243-0030, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 1.30123 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 26100 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.6) Ծածկագիրը՝ 06-088-0243-0107, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 1.35007 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 27100 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.7) Ծածկագիրը՝ 06-088-0243-0114, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ ծածկագրից առանձնացվող 2.35903 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 47200 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.8) Ծածկագիրը՝ 06-088-0224-0018, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.605 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 12100 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.9) Ծածկագիրը՝ 06-088-0244-0008, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.4798 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 9600 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.10) Ծածկագիրը՝ 06-088-0244-0003, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.46644 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 9400 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.11) Ծածկագիրը՝ 06-088-0244-0007, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 1.07202 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 21500 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.12) Ծածկագիրը՝ 06-088-0244-0016, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 0.52661 հա, հողամասի տարեկան վարձավճարի

մեկնարկային գին սահմանել 10600 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.13) Ծածկագիրը՝ 06-088-0244-0001, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 2.43449 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 48700 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

1.14) Ծածկագիրը՝ 06-088-0244-0012, գործառնական նշանակությունը՝ վարելահող, չափը՝ 2.9165 հա, հողամասի տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանել 58400 ՀՀ դրամ (վարձակալությամբ տրամադրվում է 3 տարի ժամկետով)

2.Մրցութային քայլի չափը սահմանել վարձավճարի մեկնարկային գնի 5%-ի չափով:

3.Մրցույթի մասնակցության վճարի չափը 3000 /երեք հազար/ ՀՀ դրամ է:

4.Համայնքի ղեկավարին՝ իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթները, մրցույթն իրականացնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրության և համայնքի ավագանու կողմից հաստատված կանոնակարգի համաձայն:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ

ՂՈՒՄԱՇՅԱՆ

*ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ*

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱԴԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՅՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԵՂԻՆԵ ԾԻՃԻԼՅԱՆ

Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետին, համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Շնող համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման նպատակով իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ 76-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացություն(ներ)ը՝ Շնող համայնքի ավագանին որոշում է.

- Բավարարել ՀՀ Լոռու մարզի Շնող համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
- Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում վճարել հատկացված գումարը:
- Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՂՈՒՄԱՇՅԱՆ

ԴԱՎԻԹ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ԾԻՃԻԼՅԱՆ

ԱՌԱՆՁԻՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ
ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՏՈՒՅԺԵՐԻՅ ԱԶԱՏԵԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՆՅԱԿ ԱԼԻԽԱՆՅԱՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Գույքահարկի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 3-րդ կետով, Հայաստանի
Հանրապետության «Հողի հարկի մասին» օրենքի 10-րդ հոդվածի «Ժ» կետով՝ **Շնորհ համայնքի ավագանին որոշում է.**

1.Զեղչել այն անձանց հողի հարկի և գույքահարկի տույժերը, ովքեր
ամբողջությամբ մարել են հողի հարկի և գույքահարկի մայր գումարները:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ՃԻՃԻԼՅԱՆ

ՀԵՂԻՆԵ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՀԵՂԻՆԵ ՃԻՃԻԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՒՈՒ ՄԱՐԶԻ «ՇՆՈՂԻ ԲԺՇԿԱԿԱՆ
ԱՄԲՈՒԼԱՏՈՐԻԱ» ՀՈԱԿ-Ի 2020
ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ
ՆԱԽԱՀԱՇԻՎՆԵՐՈՒՄ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԵՐՄԻՆԵ ԱՌԱՔԵԼՅԱՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, հիմք ընդունելով «Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի տնօրենի զեկուցագիրը՝ **Շնող համայնքի ավագանին որոշում է.**

1.«Շնողի բժշկական ամբուլատորիա» ՀՈԱԿ-ի 2020 թվականի տարեկան բյուջեի նախահաշիվներում կատարել փոփոխություն՝ համաձայն հավելվածի.

2.Սույն որոշման գործողությունները տարածվում են 2020 թվականի մարտի 23-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

ԴԱՎԻԹ

ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ՄԵԼԻՆԵ ՆՈՐԵԿՅԱՆ